



**ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԵՐՔՐԱՎՄԱՆ ՊԼԱՆ  
ՍԽԱՆ- ՀՐԱՋԴԱՆ ԿԱՍԿԱԴԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ  
ԾՐԱԳԻՐ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

*Վերջնական տարբերակ*

41134-SEP\_ARM  
ՀՈԿՏԵՄԲԵՐ 2012

## 1. Ներածություն

### 1.1 Նախագծի ամփոփ նկարագիր

Հայաստանի Միջազգային Էներգետիկ Կորպորացիան (ՄԷԿ), որը հանդիսանում է 565 մՎտ նոմինալ հզորություն ունեցող յոթ հիդրաէլեկտրակայանների կասկադի՝ Սևան-Հրազդան Կասկադի (Ս-Հ Կասկադ) սեփականատերը, ինչպես նաև ՄԷԿ հիմնական բաժնետեր՝ Ռուսիայի ՓԲԸ-ն պլանավորում են վերականգնել նշված կասկադի ՀԷԿ-րը: Ս-Հ Կասկադը՝ Հայաստանի էլեկտրաէներգետիկ համակարգի կարևորագույններից է, որի անխափան ու անվտանգ աշխատանքն ապահովելու և արտադրական հզորությունները վերականգնելու համար ներկայումս զգալի ներդրումներ են պահանջվում:

Ս-Հ Կասկադը կառուցվել է Հրազդան գետի վրա և ավելի քան 70 կմ տարածվում է Սևանա լճից մինչև Երևան քաղաքը: Հիդրակայանների գլխավոր սխեման ներկայացված է Նկար 1-ում:

Ս-Հ Կասկադի նախատեսվող վերականգնումն ընդգրկում է.

- Երևան 1 ՀԷԿ-ի վերակառուցում. ամբարտակի, տուրբինների փոխարինում, ջրամբարի հողահանում-խորացում;
- Սևան, Հրազդան, Արգել, Արգնի և Քանաքեռ ՀԷԿ-րի էլեկտրական սարքավորումների մեծ մասի փոխարինում (ակումուլյատորային մարտկոցներ, գեներատորներ, գրգռիչ սարքավորումներ, ստատորներ);
- Հրազդան, Արգել, Արգնի ՀԷԿ-րի շրջանցիկ ջրատարների վերակառուցում (բոլորը գոյություն ունեցող ենթակառուցների սահմաններում);
- Արգել, Հրազդան, և Քանաքեռ ՀԷԿ-րի հիդրոտեխնիկական միավորների փոխարինում

Նախատեսվող վերականգնման աշխատանքներն իրականացվելու են գոյություն ունեցող ենթակառուցների սահմաններում: Եղած ենթակառուցների ընդլայնում չի նախատեսվում: Այդ պատճառով նախագիծը բնապահպանական և սոցիալական բացասական մեծ ազդեցություն չի ունենալու: Մյուս կողմից, մի շարք զգալի դրական ազդեցություններ են ակնկալվում:

Նախատեսվող վերականգնման աշխատանքները կարող են ունենալ հետևյալ բացասական ազդեցությունները. արտանետումներ օդային ավազան, աղմկահարույց աշխատանքներ, ջրամբարի հողահանման-խորացման վայրից հոսանքագծով պղտորության առաջացում, ճանապարհային երթևեկության ինտենսիվացում, թափոնների, այդ փվում վտանգավոր թափոնների գոյացում, մասնավոր սեփականություն հանդիսացող գույքի ոչ դիտավորյալ վնասում և այլն: Այս բոլոր ազդեցությունները լինելու են կարճատև բնույթի: Դրանց նվազեցման նպատակով նախատեսվելու և իրականացվելու են հատուկ միջոցառումներ:

Ծրագրի դրական բնապահպանական և սոցիալական ազդեցություններից են լինելու. ջրի յուղերով աղտոտվածության մաքրումը, ՊԲԸ-ի հեռացումը, յուղերով աղտոտված տարածքների մաքրումը, ձեռնարկության աշխատողների և ազդակիր համայնքների բնակչության առողջության և անվտանգության ռիսկերի զգալի կրճատումը,

շինարարական աշխատանքներում զբաղվածության հնարավորությունների աճը և այլն: Այս դրական ազդեցություններն ու օգուտները մեծամասամբ երկարատև են լինելու:

ՄԷԿ ընկերությունը դիմել է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին (ՎԶԵԲ) և Ասիական Զարգացման Բանկին (ԱԶԲ) 2012- 2017 թթ ընկերության ներդրումային պլանի մասնակի ֆինանսավորման խնդրանքով: ՎԶԵԲ 2008 թ. Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականության համաձայն Ծրագիրը որակավորվել է որպես Բ դասի ծրագիր, ինչպես նաև դասակարգվելու է որպես B դասի ծրագիր բնապահպանական և C դասի ծրագիր ոչկամավոր վերաբնակեցման և տեղաբնիկների ԱԶԲ-ի 2009 թ Անվտանգության Քաղաքականության Դրույթների համաձայն:

Նկար1. Ս-Հ Կասկադի տեղադրվածության գլխավոր սխեմա



## 1.2 Շահառուների Ներգրավման Պլանի (ՇՆՊ) նպատակները

Հանրության և շահառուների ներգրավման, խորհրդատվության և թափանցիկության ՎԶԵԲ և ԱԶԲ պահանջները կատարելու նպատակով (ՎԶԵԲ ԾԻՊ10 և ԱԶԲ 2011 թ. Հանրության հետ Կապերի Քաղաքականություն) իրականացման գործընթացում կիրառվելու է Ծրագրի համար մշակված Շահառուների Ներգրավման Պլանը: Շահառուների ներգրավման նպատակն է տեղեկացնել հանրությանն ու շահագրգիռ կողմերին Ծրագրի բովանդակությունը, նրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների մասին, ինչպես նաև առաջարկվող մեղմացման միջոցառումների մասին:

Շահառուների Ներգրավման Պլանը մշակվել է նպատակ ունենալով բացատրել, թե ՄԷԿ ընկերությունը ինչպես է հաղորդակցվելու այն մարդկանց և կազմակերպությունների հետ, որոնք կարող են ազդակիր լինել կամ շահագրգռված լինել Ս-Հ Կասկադի Վերականգնման Ծրագրի նախապատրաստման և իրականացման տարբեր փուլերում: Պլանը ներառում է նաև Բողոքարկման Մեխանիզմը բացահայտելու համար Ծրագրի իրականացման ընթացքում շահառուների բոլոր մտահոգությունները և ներկայացնելու դրանք ՄԷԿ-ի ուշադրությանը:

## 2. Օրենսդրական Կարգավորում

### 2.1 Շահառուների ներգրավման/ հանրության հետ կապերի ազգային օրենսդրական հիմքերը:

2011 թվականի մայիսին Հայաստանը վավերացրեց «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» (Օրհուսի) կոնվենցիան: Կոնվենցիայի նպատակն էր բարելավել բնապահպանական հարցերի շուրջ քաղաքացիների և Կառավարության և որոշումներ կայացնողների միջև բանակցությունների գործընթացը: Այսպիսով պետական մարմինները և տեղական իշխանությունները պարտավորվում են բացահայտել սույն նախագծի իրականացման ընթացքում առաջացող բոլոր բնապահպանական հիմնախնդիրները և դրանով իսկ բավարարել Հայաստանի քաղաքացիների իրավունքը տեղեկացված լինել դրանց մասին:

Հասարակության հետ կապերի Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտը ներառում է հետևյալ օրենքները.

- «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը, որի պահանջն է ապահովել հանրության ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում;
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, որը երաշխավորում է Հայաստանի քաղաքացիների իրավունքը տեղեկացված լինել իրենց շահերի վրա ազդեցություն գործող հարցերի շուրջ և ներկայացնել իրենց մտահոգությունները որոշում կայացնողներին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (ընդունված է 1995 թ.) թվարկում է տնտեսական գործունեության այն ձևերը, որոնք ենթակա են

պարտադիր բնապահպանական փորձաքննության և որոնց համար պետք է անցկացվեն հասարակական լսումներ: Օրենքը կարգավորում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և հասարակական լսումների անցկացման իրավական, տնտեսական, ինստիտուցիոնալ և արարողակարգային նորմերը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքի համաձայն վերականգնման ծրագրերն ընդհանուր առմամբ ՇՄԱԳ-ի և հասարակական լսումների ենթակա չեն: Սակայն ծրագրերի բաղադրիչներից մեկը՝ ջրամբարի հողահանման-խորացման աշխատանքները նշված են օրենքի Հոդված 4-ում թվարկված գործունեության ձևերի ցուցակում և ըստ այդմ ենթակա են ՇՄԱԳ գործընթացի և հասարակական լսումների: Դրա հետ կապված հետևյալ գործողությունները հանդիսանում են ՇՄԱԳ-ի և հանրության ներգրավման առարկա.

- Վտանգավոր թափոնների տեղադրում կամ վերամշակում;
- Թափոնների տեղադրման ենթակառույցների ստեղծում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքը այնուհետ սահմանում է հանրության իրազեկման և լսումների կազմակերպման արարողակարգը: Օրենքի համաձայն Ծրագիրը ձեռնարկողը, որը մտադիր է իրականացնել Հոդված 4-ում թվարկված որևէ գործունեություն պարտավոր է այդ մասին ծանուցել լիազորված մարմին, որը իր հերթին դիտարկում է ծրագրի մասին ծանուցումը, պարզում դրա Օրենքի ենթակայության առարկա լինելը և հետևաբար շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության անհրաժեշտությունը: Լիազորված մարմինը պարտավոր է իրազեկ պահել ազդակիր համայնքների ղեկավարներին և հանրությանը նախատեսվող գործունեության իրականացման նախաձեռնության մասին: Ազդակիր համայնքի ղեկավարները եւ ձեռնարկողը ծանուցումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում կազմակերպում են նախատեսվող գործունեության վերաբերյալ հասարակական լսումներ տեղական համայնքների մտահոգությունները քննարկելու նպատակով: Եվս 15-օրյա ժամկետ է հատկացվում հնարավոր հասարակական կարծիքների և առաջարկությունների համար, որից հետո ծանուցումից 30-օրյա ժամկետում լիազորված մարմինը որոշում է կայացնում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման կամ չիրականացման մասին և իրազեկ է պահում ձեռնարկողին:

Այնուհետև, Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության իրականացման անհրաժեշտության դեպքում ձեռնարկողը լիազորված մարմին է ներկայացնում Հոդված 7-ից բխող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը պարունակող փաստաթղթերը: Փաստաթղթի օրինակները լիազոր մարմինը տրամադրում է ազդակիր համայնքների ղեկավարներին, վերջիններս 5-օրյա ժամկետում լրատվական միջոցներով տեղեկացնում են, թե որտեղ և երբ է հնարավոր ծանոթանալ և տվյալներ ստանալ փաստաթղթերի մասին: Լիազորված մարմինը, ազդակիր համայնքի ղեկավարները և ձեռնարկողը 30 օրացուցային օրվա ընթացքում կազմակերպում ու ապահովում են հանրության կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունը և լսումները: Հանրության կարծիքը, այդ թվում այլ պետական մարմինների և շահագրգիռ կողմերի առաջարկությունները, նշված ժամանակամիջոցում ներկայացվում են ազդակիր համայնքի ղեկավարներին կամ անմիջապես լիազորված մարմին:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը չի պահանջում հանրության և/կամ ազդակիր համայնքների ներգրավման շարունակումը ՇՄԱՓ դրական եզրակացություն ստանալուց և ծրագրի իրականացման մասին դրական որոշում կայացնելուց հետո, այսինքն ծրագրի իրականացման փուլում, ինչպես նաև չի պահանջում դիտարկել

բողոքարկումները ՇՄԱԳ գործընթացի և հասարակական լուսմանի համար օրենքով սահմանված ժամկետներից դուրս: Շահառուների Ներգրավման Պլան Հայաստանի օրենսդրությամբ նույնպես չի պահանջվում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն նախաձեռնվող Ծրագիրում հանրության ներգրավվածությունն ապահովել չի պահանջում մինչև ջրամբարի հողահանման- խորացման և հանված տիղմի տեղադրման աշխատանքների վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման անհրաժեշտության մասին հարցի պաշտոնական դիտարկումը:

## **2.2 Շահառուների ներգրավման և հասարակության հետ կապերի վերաբերյալ ՎՁԵԲ և ԱԶԲ պահանջները:**

ՎՁԵԲ և ԱԶԲ B դասի ծրագրերի համար սկզբունքների և պահանջների մանրամասները նկարագրված են համապատասխանաբար ՎՁԵԲ ԾԻՊ10 «Տեղեկատվության բացահայտում և շահառուների ներգրավում» և ԱԶԲ 2011 Հանրության հետ կապերի Քաղաքականության մեջ: Հանրության ներգրավման հարցերի վերաբերյալ նշված երկու ֆինանսական հաստատությունների ընդհանուր սկզբունքներն ու մոտեցումները համընկնում են և հիմնված են «Հավասարության սկզբունքների» վրա: Նրանց քաղաքականությունները ներառում են համակարգված մոտեցումներ օգնելու հաճախորդին կառուցողական հարաբերություններ ունենալ շահառուների հետ և հատկապես ազդակիր համայնքների հետ:

ՎՁԵԲ և ԱԶԲ քաղաքականությունների համաձայն շահառուների ներգրավումը շարունակական գործընթաց է և ներառում է նախատեսվող գործունեության և դրա հետ կապված բնապահպանական հարցերի ու մեղմացման միջոցառումների վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հասանելիության ապահովումը, որպիսի հնարավոր լինի շահառուների և ազդակիր կողմերի հետ արդյունավետ քննարկումներ իրականացնել: Տեղեկատվությունը պետք է շահառուներին տրամադրվի ժամանակին, և լինի հասկանալի ու մատչելի: Այս գործընթացը պետք է սկսվի Ծրագրի իրականացման առաջին իսկ փուլում և շարունակական լինի իրականացման ամբողջ ընթացքում: Քննարկումները պետք է տեղի ունենան ազատ ու անկաշկանդ միջավայրում, որպիսի հնարավոր լինի ազդակիր մարդկանց և այլ շահառուների տեսակետները հաշվի առնել որոշումների կայացման բոլոր փուլերում, ինչպիսիք են Ծրագրի նախագծման, մեղմացման միջոցառումների, օգուտների և հնարավորությունների բաշխման, ընթացիկ աշխատանքների փուլերը:

Շահառուների արդյունավետ ներգրավվածությունն ապահովելու նպատակով, նախաձեռնողը պետք է հստակ պատկերացում ունենա, թե ովքեր են Ծրագրի շահառուները, հատկապես ուղղակի ազդեցություն կրող կողմերը: Ներգրավման պլանը պետք է շեշտակի ուշադրություն դարձնի խոցելի և տուժող բնակչությանը, որը կարող է ազդակիր լինել Ծրագրի իրականացման ընթացքում: Ավելին, շահառուներին պետք է դիտողությունների և բողոքների ներկայացման արարողակարգ առաջարկվի:

Երկու բանկերն էլ պահանջում են մշակել Շահառուների Ներգրավման Պլան, որի նպատակն է ապահովել Ծրագրի բոլոր շահառուների հստակեցված շրջանակը,

հանդիպումներին և քննարկումներին նրանց պատշաճ ներգրավվածությունը, ինչպես նաև բողոքարկման մեխանիզմի առկայությունը:

### **2.3. Ծրագրի հանրության հետ կապերի սկզբունքները**

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի օրենքները Սևան-Հրազդան Կասկադի նախատեսվող վերականգնման համար հասարակական քննարկումներ չեն պահանջում: Գործընթացը պլանավորվելու և իրականացվելու է բացառապես ՎՋԵԲ և ԱԶԲ պահանջներից ելնելով: Սևան-Հրազդան Կասկադի վերականգնման ծրագրի մեջ հանրության ներգրավման համար մասնավորապես ձեռնարկվելու են հետևյալ քայլերը.

- Հետագա քննարկումների նպատակով որոշվելու են Ծրագրի շահառուները ըստ խմբերի՝ ազդակիր համայնքներ, բնակչություն, այլ շահագրգիռ կողմեր, ինչպես նաև հստակեցվելու են նրանց ներգրավվածության շրջանակները;
- Շահառուների յուրաքանչյուր խմբի համար մշակվելու է նրանց տեղեկացվածությունը երաշխավորող քննարկման մեխանիզմ քննարկումների և որոշումների կայացման գործում արդյունավետ ներգրավվածություն ապահովելու նպատակով;
- Շահառուների բոլոր խմբերի հետ անց են կացվելու անհրաժեշտ մակարդակի հանդիպումներ և քննարկումներ;
- Բողոքարկման մեխանիզմ է մշակվելու և ներդրվելու որպիսի բոլոր բողոքներն ու մտահոգությունները ներկայացվեն և դիտարկվեն պատշաճ հետևողականությամբ:

### 3. Շահառուների շրջանակի որոշումը և նրանց հետ կապերի հաստատման եղանակները

Շահառուների հետ հարաբերությունների կառուցման գործում ՎԶԵԲ ԾԲՊ10 և ԱԶԲ 2011 Հանրության հետ կապերի քաղաքականությանը համահունչ լինելը ապահովելու նպատակով առաջարկվում է, որ ՄԷԿ ընկերությունը պարզի, թե ովքեր են բոլոր այն շահառուները, ովքեր կարող են ազդակիր կամ հետաքրքրված լինել Ս-Հ Կասկադի վերականգնման Ծրագրի մեջ:

Շահառուներ կարող են լինել.

- Ներքին շահառուներ, ինչպիսիք են
  - ՄԷԿ ընկերության աշխատակիցները
  - ՄԷԿ ընկերության ենթակապալառու շինարարական կազմակերպությունների աշխատակիցները
- Արտաքին շահառուներ
  - Ծրագրի ազդակիր համայնքները
  - Ծրագրի ազդակիր համայնքների տեղական իշխանության մարմինները
  - Պետական կառավարման մարմինները, այդ թվում էներգետիկայի, բնության պահպանության, ջրային տնտեսության, գյուղատնտեսության, սոցիալական և այլ ոլորտների;
  - Սևանա լճի ջրի կառավարման և Սևան-Հրազդան համակարգի միջոցով ջրի բացթողման համար լիազորված մարմինները;
  - Համայնքային հասարակական և ոչ-պետական կազմակերպությունները:

Սևան-Հրազդան Կասկադը գտնվում է Կոտայքի և Գյուղարքունիկի մարզերի, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական տարածքներում: Հաշվի առնելով Ծրագրում նախատեսվող գործողությունները ազդակիր կարող են լինել հետևյալ համայնքները.

- Երևան քաղաքի վարչական տարածքում
  - Երևան քաղաքի Քանաքեռ- Զեյթուն համայնքը
- Գեղարքունիկի մարզում
  - Գեղամավան գյուղը
- Կոտայքի մարզում
  - Գետամեջ, Սուլակ և Նոր Գեղի գյուղերը, ինչպես նաև Նոր Հաճն, Չարենցավան և Հրազդան քաղաքները:

Համապատասխանաբար՝ նշված բնակավայրերի վարչական մարմինները դիտարկվելու են որպես հանրային քննարկումների գործընթացում ընդգրկվելիք տեղական իշխանության ներկայացուցիչ մասնակիցներ: Ծրագրի հետ առնչվող տեղեկատվության, այդ թվում նախատեսվող գործունեության և մեղմացման միջոցառումների քննարկման և հանրության մտահոգությունների հետ ծանոթանալու համար յուրաքանչյուր համայնքում կազմակերպվելու են հանրային հանդիպումներ տեղական իշխանության և համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպումները տեղի են ունենալու մինչև նախապատրաստական և շինարարական աշխատանքների սկսելը: Բողոքարկման մեխանիզմ է առաջարկվելու ազդակիր համայնքներին հետագա մտահոգություններն ու պահանջները ներկայացնելու համար:



Էներգետիկայի, բնության պահպանության, ջրային տնտեսության, գյուղատնտեսության, սոցիալական և այլ հարցերով պետական կառավարման մարմինները ներկայացված են հետևյալ նախարարություններով

- Բնապահպանության նախարարություն
- Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- Էկոնոմիկայի նախարարություն
- Գյուղատնտեսության նախարարություն
- Տարածքային կառավարման նախարարություն

Անընդհատ կապեր են հաստատվելու կառավարման մարմինների հետ ապահովելու համար վերջիններիս տեղեկացվածությունը նախատեսվող գործունեության վերաբերյալ, աջակցությունը Ծրագրին և անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերումը:

Սևանա լճի կառավարման և Սևան-Հրազդան համակարգի միջոցով ջրի բացթողման համար լիազորված մարմիններն են

- Ջրային տնտեսության պետական կոմիտեն (ՋՏՊԿ), որը գործում է Տարածքային կառավարման նախարարության կազմում և որի գործառույթներից է սպառողների միջև ռոտզման և խմելու ջրի բաշխումն ու մոնիտորինգը;
- Սեվան-Հրազդան Ջրառ ՓԲԸ, որը ստեղծվել է ՋՏՊԿ կազմում և որը սահմանում է ռոտզման ջրի սահմանային մեծություններն ու տալիս է թույլտվություններ

Նշված մարմինների հետ համատեղ քննարկելվու են շրջանցիկ ջրատարներից համայնքների կողմից ապօրենի ջրառի կանխարգելման հարցերը: Այդ կառույցներին դիմվելու է նախնական պլանավորման փուլում համոզված լինելու համար, որ հարցը լուծված է ինչպես նշված մարմինների, այնպես էլ ապօրենի ջրօգտագործողների շահերից ելնելով:

Համայնքային և այլ ոչ-պետական կազմակերպությունները թույլ են զարգացած Հայաստանում: Պատշաճ Ուսումնասիրության ընթացքում Ծրագրի իրականացման տարածքում որևէ ակտիվ գործող համայնքային հասարակական կազմակերպություն չի գրանցվել: Հասարակական ոճ-պետական կազմակերպությունները հիմնականում ներկայացված են մայրաքաղաք Երևանում, որտեղ մամուլի միջոցները բավականաչափ զարգացած են:

Ստորև բերված Աղյուսակ 1 ամփոփում է շահառուների ներգրավման և քննարկումների եղանակները, որոնք կիրառվելու են տեղեկացնելու շահառուներին նախատեսվող գործունեության մասին: Առաջարկվող քննարկումների եղանակների բարելավման ուղղությամբ ցանկացած առաջարկ ողջունելի է և կարող է հաղորդվել սույն փաստաթղթի վերջում ներկայացված կապ հաստատելու տվյալների միջոցով

Աղյուսակ 1.ՄԷԿ Սևան-Հրազդան Կասկադի վերականգնման Ծրագրի Շահառուների ներգրավման պլան

Շահառուների խումբը	Քննարկումների եղանակը/ մեթոդը
<b>Ներքին շահառուներ</b>	
Ընկերության աշխատակիցներ	<ul style="list-style-type: none"> <li>- Ներքին շրջանառության տեղեկատվական թերթիկներ</li> <li>- Բողոքարկման արարողակարգ</li> <li>- տեղեկատվական տախտակ</li> <li>- աշխատակազմի ժողովներ</li> <li>- ընկերության վեբ-կայք</li> </ul>
Ժամանակավոր շինարարական աշխատողներ, ենթակապալառուներ	<ul style="list-style-type: none"> <li>- Պայմանագրով նախատեսված տեղեկատվություն</li> <li>- ծանոթացման սեմինարներ</li> <li>- տեղեկատվական տախտակ, դասընթացներ</li> <li>- Բողոքարկման արարողակարգ</li> </ul>
<b>Արտաքին շահառուներ</b>	
<p>Ազդակիր համայնքներ</p> <ul style="list-style-type: none"> <li>• Քանաքեռ- Զեյթուն համայնք, Երևան քաղաք</li> <li>• Գեղամավան, Գեղարքունիկի մարզ</li> <li>• Գետամեջ, Մոլակ, Նոր Գեղի, Նոր Հաճն, Չարենցավան, Հրազդան, Կոտայքի մարզում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>- պաշտոնական և ոչպաշտոնական հանդիպումներ;</li> <li>- ՇՆՊ և ԲՍԳՊ</li> <li>- Ընթացիկ հանդիպումներ ընկերության և ենթակապալառուների աշխատողների հետ</li> <li>- Բողոքարկման արարողակարգ</li> <li>- Ընկերության վեբ-կայք</li> <li>- Տեղեկատվական թերթիկներ;</li> <li>- Հեռուստատեսային հայտարարություններ (անհրաժեշտության դեպքում)</li> </ul>
Տեղական իշխանություններ	<ul style="list-style-type: none"> <li>- Համայնքների ղեկավարների հետ պաշտոնական հանդիպումներ</li> <li>- ՇՆՊ և ԲՍԳՊ</li> <li>- Տեղեկատվական թերթիկներ;</li> <li>- Ընկերության վեբ-կայք</li> </ul>
Պետական կառավարման մարմիններ	<ul style="list-style-type: none"> <li>- Պաշտոնական բնապահպանական մոնիտորինգ (ջրի հոսք, մակարդակ, այլ)</li> <li>- ԲՍԳՊ</li> <li>- Պաշտոնական նամակագրություն</li> <li>- Հանդիպումներ</li> </ul>
Սևանա լճում ջրի մակարդակի և ջրառի հարցերով զբաղվող մարմիններ	<ul style="list-style-type: none"> <li>- Հանդիպումներ և բանակցություններ</li> </ul>

	<ul style="list-style-type: none"><li>- ԲՄԳՊ</li><li>- Պաշտոնական նամակագրություն</li><li>- Ընկերության վեբ-կայք</li></ul>
Հասարակական ոչպետական կազմակերպություններ	<ul style="list-style-type: none"><li>- Ընկերության վեբ-կայք</li></ul>

#### 4. Ծրագրի հետ ծանոթություն և քննարկումներ

ՎԶԵԲ և ԱԶԲ ծրագրերի իրականացման բնապահպանական և սոցիալական պահանջներին և ստանդարտներին համապատասխանելու նպատակով, ՄԷԿ-ը մշակելու, հանրությանը ներկայացնելու և իրականացնելու է Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանը (ԲՍԳՊ), որն ընդգրկելու է մեղմացման միջոցառումներ ուղղված շրջակա միջավայրի և բնակչության վրա հնարավոր բացասական ազդեցությունները նվազեցնելուն, կրճատելուն, վերացնելուն կամ հսկելուն: ԲՍԳՊ վերջնական տարբերակը կհրապարակվեն ՄԷԿ պաշտոնական վեբ-կայքում, տպագիր օրինակները կտրամադրվեն ազդակիր կողմերին հասարակական հանդիպումներին կամ հասանելի կլինեն ըստ պահանջի ՄԷԿ Երևանյան գրասենյակում (հասցեն և կապ հաստատելու այլ տվյալները տես ստորև): ՄԷԿ-ը լրացուցիչ կունենա նաև Ծրագրի Ոչ Տեխնիկական Ամփոփագիր, որը կտրամադրվի հիմնական շահառուներին, այդ թվում պետական մարմիններին, շահագրգիռ կազմակերպություններին և համայնքներին:

Հնարավոր ազդակիր համայնքները, այդ թվում Երևան քաղաքի և ջրատարերի երկայնքով գտնվող համայնքների բնակչությունը (տես Աղյուսակ 1) հասարակական հանդիպումների միջոցով ժամանակին կստանան տեղեկատվություն և շրջանառության մեջ գտնվող փաստաթղթերը նախատեսվող գործունեության, ինչպես նաև այն միջոցառումների վերաբերյալ, որոնք նախատեսված են շինարարական աշխատանքների հնարավոր ազդեցությունների մեղմացման համար, այդ թվում շինարարական հրապարակներում աշխատանքի անվտանգության, երթևեկության կառավարման միջոցառումների, աշխատատեղերի առկայության, բողոքների ներկայացման մեխանիզմի և ԲՍԳՊ-ով նախատեսված այլ միջոցառումների մասին: Հասարակական հանդիպումները կազմակերպվելու են յուրաքանչյուր ազդակիր համայնքում մինչև վերականգնման աշխատանքները սկսելը: Վերականգնման աշխատանքների ընթացքում շարունակական կապ է հաստատվելու տեղաբնիկների հետ շինարարական հրապարակներում ընկերության կամ ենթակապալառուների աշխատող անձնակազմի միջոցով: Ավելին, համայնքներին առաջարկվելու է բողոքարկման մեխանիզմ ընկերությանը հնարավոր մտահոգությունները ներկայացնելու համար:

Սևան- Հրազդան Ջրառ ՓԲԸ հետ քննարկվելու է կողմնատար ջրատարների ապօրենի միացումների հիմնախնդիրը: Քննարկումները անց են կացվելու սկզբնական փուլում որպիսի ապօրենի միացումների հարցը լուծում ստանա ապօրենի ջրօգտագործողների շահերը հաշվի առնելով խուսափելու համար տեղական բնակչության վրա բացասական սոցիալ- տնտեսական ազդեցությունից:

Շարունակական կապ է հաստատվելու պետական կառավարման մարմինների հետ ապահովելու վերջիններիս պատշաճ տեղեկացվածությունը նախատեսվող աշխատանքների մասին, ինչպես նաև անհրաժեշտ թույլտվությունների ձեռքբերումը:

Հրապարակման ենթակա գլխավոր փաստաթղթերն են Ծրագրի Ոչ Տեխնիկական Ամփոփագիրը և ԲՍԳՊ, որոնք հասանելի կլինեն բոլոր շահառուների համար: Բացի այդ, տեղեկատվական թերթիկներ և հայտարարություններ են կիրառվելու տեղեկատվության թարմացման նպատակով: Ծրագրի բողոքարկման մեխանիզմ է առաջարկվելու բոլոր շահառուներին մտահոգությունները ներկայացնելու և պատասխան ասարձագանքման գործողություններ ձեռնարկելու համար: Շահառուների ներգրավման գործընթացը

անխափան և արդյունավետ դարձնելու համար ՄԷԿ-ը պատասխանատու անձ է նշանակելու ընկերության հետ համայնքի մշտական կապ ապահովելու նպատակով: Պատասխանատու անձի պարտականություններից է լինելու տրամադրել և թարմացնել Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը, կազմակերպել հասարակական հանդիպումներ, հավաքագրել համայնքների բողոքների և մտահոգությունների մասին տեղեկությունները ու նպաստել դրանց արագ արձաքանքմանը և այլն:

Այնուհետև, Հայաստանի օրենսդրությանը և ՎԶԵԲ ու ԱԶԲ ստանդարտներին համապատասխան կկազմակերպվեն ջրամբարի հողահանման- խորացման աշխատանքների բնապահպանական ազդեցության գնահատման վերաբերյալ հասարակական լսումներ: ՇՄՊ-ը համապատասխանաբար կվերանայվի ընդգրկելու համար նաև նոր ի հայտ եկած շահառուներին և նրանց մասնակցությունը ապահովող գործընթացը:

Բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, առողջության և աշխատանքի անվտանգության գործողությունները, ինչպես նաև արտաքին բողոքարկման մեխանիզմի իրականացումը նկարագրող տարեկան հաշվետվությունները նույնպես հրապարակվելու են ՄԷԿ պաշտոնական վեբ-կայքում և ըստ պահանջի կարող են տրամադրվել ՄԷԿ Երևանյան գրասենյակում կամ տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներում:

## 5. Բողոքարկման մեխանիզմ

Բողոքարկման մեխանիզմի նպատակն է ապահովել, որպիսի Ծրագրի ցանկացած շահառուի, այդ թվում տեղական/մարզային իշխանությունների, հարևան բնակավայրերի բնակիչների, ՄԷԿ աշխատակիցների, ենթակապալառու կազմակերպությունների անձնակազմի և այլ շահագրգիռ կոմերի կողմից ներկայացվող բոլոր նկատողություններն ու բողոքները հավաքագրվեն և ժամանակին ու պատշաճ կերպով պատասխան արձաքանք ստանան:

ՄԷԿ-ը պատրաստ է լինելու ընդունել Ծրագրի հետ կապված բոլոր նկատողություններն ու բողոքները: Նկատողությունների և բողոքների ձևաչափը, որը մշակված է օգնելու համայնքների անդամներին ներկայացնելու իրենց մտահոգությունները ներկայացված է Հավելված Ա-ում: Ցանկացած այլ ձևաչափով ներկայացված դիմումները նույնպես ընդունելի կլինեն: Դրանք պետք է պարունակեն դիմորդի հետ կապ հաստատելու տվյալները, որպիսի ՄԷԿ-ը մանրամասների համար դիմելու կամ պատասխան գործողությունների մասին տեղեկացնելու հնարավորություն ունենա:

Ընդ որում առաջարկներ կամ բողոքներ ներկայացնող անձանց համար իրավունք է վերապահվելու ցանկության դեպքում իրենց անունը չբացահայտել:

Ցանկացած անձ կամ կազմակերպություն կարող է ուղարկել իր առաջարկները կամ բողոքները փոստով, էլեկտրոնային փոստով կամ ֆաքսով ստորև բերված հասցեներով.

- ՄԷԿ գրասենյակի հասցե. Հայաստան, Երևան 0012, Ադոնցի փ., 10 Բ

- ՄԷԿ պաշտոնական վեբ-կայք. [www.mek.am](http://www.mek.am)
- Էլեկտրոնային հասցե. [office@mek.am](mailto:office@mek.am)
- Հեռախոս. (+374 10) 24 50 99, 23 08 12
- Ֆաքս: (+374 10) 24 51 99

Բոլոր բողոքները գրանցվելու և ընդունվելու են 5 օրվա ընթացքում, իսկ արձագանքման գործողությունները ձեռնարկվելու են 20 աշխատանքային օրվա ընթացքում: Բոլոր առաջարկների և բողոքների պատասխանը տրվելու է բանավոր կամ գրավոր ձևով համաձայն Առաջարկների և բողոքների ձևում դիմորդի կողմից նշված նախընտրելի եղանակի: Հնարավոր է, որ առաջարկները ուսումնասիրվեն և հաշվի առնվեն ծրագրում սակայն դիմորդը կարող է անհատական պատասխան չստանալ, բացառությամբ այն դեպքերի երբ դիմորդը պատասխանի հատուկ պահանջ է ներկայացրել:

Շինարարական աշխատանքներին վերաբերվող բողոքները դիտարկվելու են ՄԷԿ-ի և շինարարական ենթակապալառու կազմակերպության կողմից: Ազդակիր համայնքներին ենթակապալառուի մասին հաղորդակցման տեղեկատվություն կտրամադրվի հասարակական վայրերում հայտարարությունների միջոցով: Հատուկ բողոքարկման մեխանիզմ կառաջարկվի ՄԷԿ-ի, կապալառուների և ենթակապալառու կազմակերպությունների աշխատակիցների համար:

Առաջարկներն ու բողոքները կամփոփվեն և կգրանցվեն առաջարկների/բողոքների գրանցամատյանում նշելով առաջարկողի/բողոքողի անունը, ներկայացման ամսաթիվը, հարցի համառոտ նկարագիրը, առաջարկվող ուղղիչ գործողությունների մասին տեղեկատվությունը (եթե կիրառելի է), ինչպես նաև դիմորդին ուղարկված պատասխանի ամսաթիվը: ՄԷԿ-ը ներկայացնելու է հաշվետվություն բողոքարկումների կառավարման վերաբերյալ որպես տարեկան հաշվետվության բաղկացուցիչ մաս, որը հասանելի կլինի ՄԷԿ վեբ-կայքում, ինչպես նաև ՄԷԿ Երևանյան գրասենյակում և գյուղապետարաններում:

**Հավելված Ա. Առաջարկների և բողոքների ձև**

Անձանց կողմից առաջարկների, բողոքների ներկայացման ձև

Նո.	
Անուն, ազգանուն	
Կապ հաստատելու տվյալներ և նախընտրելի եղանակ  Նշել, թե կապի որ եղանակն էք նախընտրում (փոստ, հեռախոս, էլեկտրոնային փոստ)	<input type="checkbox"/> Փոստով ( նշել փոստային հասցեն) <hr/> <hr/> <hr/> <input type="checkbox"/> Հեռախոսով <hr/> <input type="checkbox"/> Էլեկտրոնային փոստով <hr/>
Պատահարի կամ բողոքի նկարագրություն	Ի՞նչ է խնդրո առարկան, ու՞մ կողմից է առաջացվել խնդիրը, ո՞րտեղ, ի՞նչ հետևանք ունեցավ կատարվածը, խնդրի առաջացման աղբյուրն ու տևողությունը
Պատահարի/ բողոքի ամսաթիվը	
	<input type="checkbox"/> Տեղի է ունեցել մեկ անգամ (ամսաթիվը _____) <input type="checkbox"/> Տեղի է ունեցել բազմիցս (քանի՞ անգամ _____) <input type="checkbox"/> Անընդհատ տեղի ունեցող երևույթ
Ի՞նչ գործողություններ կուզենայիք ձեռնարկված լինելին	

Ստորագրություն \_\_\_\_\_  
 Ամսաթիվ \_\_\_\_\_